

# ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ

(Les affaires sont les affaires)

Կոմեդիա Յունական 3 գործողութեամբ

ՕԿՏՈՒ ՄԻՐԲՈՒ

(Ենթակայացուած Պարիզի *La Comédie-Française* թա-  
տրոնում 1903 թ. ապրիլի 20-ին)

(Թարգմանութիւն Գրանսերէնից)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԻՍԻԴՈՐ ԼԲՇԱ, լրագրի տնօրին, գործնական մարդ, 57 տարեկ.

ՄԱՐԿԻԶ Դ. ՊՈՐՍԵՆԻ, 60 տարեկան:

ՔՍԱՎԻԷ ԼԲՇԱ, իսիդոր լըշայի որդին, 21 տարեկան:

ԼԻՒՍԻԷՆ ԳԱՐՐՈ, քիմիկոս, իսիդոր լըշայի մօտ ծառացող, 30 տ.

ՖԻՆԿ, էլեկտրօ-տեխնիկ, 35 տարեկան:

ԳՐՈՒԳ, էլեկտրօ-տեխնիկ, 35 տարեկան:

ՎԻԿՈՆՏ Դ. Լ. ՖՈՆՏՏԻՆԻ, վոգերդիւ դղեակի կառավարիչը,  
35 տարեկան:

ԳԼԻԱԽՈՐ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ:

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱԽՈՐԸ:

ՓՈՔՐԻԿ ՊԱՐՏԻԶՊԱՆԻ:

ԺԱՆ:

ՏԻԿ. ԻՍԻԴՈՐ ԼԲՇԱ, 57 տարեկան:

ԺԵՐՄԱՆ ԼԲՇԱ, նրա աղջիկը, 25 տարեկան:

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱԽՈՐԻ ԿԻՆԸ:

ԲԺՇԿԻ ԿԻՆԸ:

ՀԱՐԿ ՀԱԽԱՔՈՂԻ ԿԻՆԸ, ևալն:

Պիեսայի երեք գործողութիւնն էլ տեղի են ունենում մեր օրերում, վո-  
պերդիւ դղիակում—պատմական կալուածք, որ այժմ Խորհոր Լըշայի սե-  
փականութիւնն է կազմում:

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է Վ. ռավերի դղեակի պարտէզները: Դէպի աշ ոսկէ-  
զօծ ջաներով զարդարած մի հոյակապ սանդուղք տանում է դէպի դղեա-  
կը, որ անտեսանելի է, քայց գուշակում է, որ նրա նակատը դարձրած  
է դէպի բեմի խորքը: Սանդուղքի ներքեւի ծայրը դարձրած է դէպի դահ-  
լին: Նրա մի կողմում գտնում է վարդենիների մի մումք, միւս կողմում՝  
ծաղկած թիֆիներ: Դէպի ծախ եւ խորքում ընկած է մի պարկ, մի անա-  
գին պարկ և la française՝ ծաղկած մարմանդներ (pelouse), հրաշալի  
աւազաններ, տերրասներ՝ զարդարած, հարթ կորտած ծառերով եւ մար-  
մարէ վանդակապատով: Դարձեալ դէպի ծախ, մի մեծ ծառի ստուե-  
րում բարձրանում է մի կիսարձան, որի զագաթին բազմած է կանաչ  
գոյն ստացած մարմարէ ֆաւն չաստուածք: Լայն ծառուղիները գնում,  
հեռանում են պարկի խորքերը: Նրանց արանքով երեւում են զաշտ,  
ազարակներ եւ անտառապատ բրակներ... ձոխ եւ շրեղ դեկորացիա:  
Վարագոյրը բարձրանալիս տիկին Լըշա՝ ժանեակներով զարդարուած, նրս-  
տած է ողորու փայտէ մեծ բազկաթոռի վրայ, շուրջը բարձեր: Լայն,  
մեծ ակնոցները աշքերին՝ նա հիւսուածք է անում: Նրա մօտ զրած է իր  
ծեռագործի զամբիւղը: Դա մի խոշոր կին է. դէմքը ներմակ, կակուղ եւ  
գոենիկ, հագուստը շատ հարուստ: Սրանից դէպի ծախ ժերմին, նրա աղ-  
ջիկը, կիսապակած՝ մի տեսակ chaise longue-ի վրայ, մի բաց զիրք  
էլ ծնկներին... Նա՝ հայեացքը յառած պարկից դուրս՝ դէպի դաշտավայրը,  
մտածմունքների մէջ ընկողուած՝ երազում է... Քանին եւ հինգ տարեկան,  
մարմինը ճկուն, աչքերը տիսուր եւ կրակուտ: Զայնը զեղեցիկ: հազնուած  
է շատ պարզ, հասարակ, գրեթէ անփոյթ կերպով...

Այստեղ-այստեղ սեղաններ, նստարաններ:

Սեպտեմբեր ամսի մի զեղեցիկ օրուայ վերջն է:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԿԻՆ ԼԲՇԱ, ԺԵՐՄԵՆ, ապա ՄԻ ՍՊԱՍԱՀՈՐ

ՏԻԿ. ԼԲՇԱ. (Ուսանց զլուխը իր գործից բարձրացնելու) ԺԵՐ-  
ՄԵՆ...

ԺԵՐՄԵՆ. Ի՞նչ է...

ՏԻԿ. ԼԲՇԱ. Ինչու չես խօսում...

ԺԵՐՄԵՆ. Պատճառն այն է անկասկած, որ ասելիք չ'ունեմ.

Տ. ԼԲՇԱ. Դու բաւական կարդացիր...

ԺԵՐՄԵՆ. Ես չեմ կարդում:

Տ. ԼԲՇԱ. Անուրջների մէջ ես ընկած...

ԺԵՐՄԵՆ. Ո՞չ...

Տ. ԼԲՇԱ. Սապա ի՞նչ ես անում...

ԺԵՐՄԵՆ. Ոչինչ... ձանձրանում եմ...

ՏԻԿ. ԼԲՇԱ. (Ուսերը վեր թօթուելով) Այս... այս... ես  
այդ գիտեմ... էհ ուրեմն... ինձ լսիր... Այս քիչ քեզ կը գրա-  
դացնէ... Ժամի քանիսն է:

ԺԵՐՄԵՆ. Վեցը...

ՏԻԿ. ԼԲՇԱ. Վեցը... արդէն... Որպէս արագ է անցնում  
ժամանակը, (Գաւթից զորս է զախս մի սպասաւոր՝ անակի մէջ  
մի հեռազիր ծեռքին. նա իշնում է սանդուղքներով) Այդ ի՞նչ է...

ՍՊԱՍԱՀՈՐԸ. Հեռագիր, տիկին:

ՏԻԿ. ԼԲՇԱ. (Գործը թողնելով) Հեռագիր... Ո՞վ պի-  
տի ինձ հեռագրէ... (Շփոթուած) Տարօրինակ բան... ամեն մի  
հեռագիր ստանալիս կարծես մի հարուած եմ ստանում...  
(Նա վերցնում է հեռագիրը, բանում: Սպասաւոր կամենում է հեռանալ)  
Սպասեցէք... (Նայելով հեռագրին) Օստենդէից... Քո եղրօ-  
րիցն է... (Կարդալով) «Վազը նախաճաշին կը լինեմ վոպեր-  
դիւ... Քսալիէ»: (Սպասաւորին) Դուք ի՞նչ էք անում այսաեղ...  
լաւ, գնացէք: (Սպասաւորը հեռանում է) Վազը... ձիարշաւ է...  
Քսալիէ... (Ճակատը կնճռած՝ նա ծեռքերով պտտեցնում է հեռա-  
գիրը) Տարօրինակ է այս... (Գլուխը շարժելով) Այստեղ մի  
բան կայ, ոչ լաւ բան... (Քիչ ժամանակից յետոյ) Յամենայն գէպս  
որդիւական քնքութենը չէ նրան այս կողմերը ուղղում... Ես  
գրագ կը գամ, որ նա հեռագրի փողը չի վճարել... (Նա գննում  
է հեռագիրը) Անտարակրյու... Ես համոզուած էի... (Հեռագիրը  
սեղանի վրայ շտկելով եւ ախ բաշելով) Ի՞նչ արած... (Նորից իր գոր-  
ծուածքը սկսելով) Ժամի քանիսն է:

ԺԵՐՄԵՆ. Ես արդէն քեզ ասացի... Վեցը...

Տիկ. ԼԲՇԱ. Ախ, հա...ի՞նչպէս անցնում է ժամանակը... իսկ քո հայրը... Ես շատ անհանգիստ եմ... Նրա սովորութիւնն է՝ հրաւիրել մեզ մօտ բոլոր իրան հանդիպողներին... Տեսնենք՝ այսօր ում է քաշում բերում Պարիղից... Դու չը գիտես, հըմ... ԺԵՐՄԵԿՆ. Ես ի՞նչպէս կարող եմ իմանալ...

Տ. ԼԲՇԱ. Նա կարող էր քեզ ասել...

ԺԵՐՄԵԿՆ. Այս առաւօտ ես նրան չեմ տեսել... Եւ վերջապէս իմ հայրը ինձ հետ ոչ մի բանի մասին երբէք չի խօսում...

Տ. ԼԲՇԱ. Իհարկէ... Այնպէս ես դու խիստ վարւում նրա հետ...

ԺԵՐՄԵԿՆ. Եւ վերջապէս գիտէ նա արդեօք առաւօտեան ժամին իննին, թէ ի՞նչ պիտի անէ երեկոյեան վեցին:

Տ. ԼԲՇԱ. Դա... դա ճիշտ է... Այդ նրան շատ նման է: (Մի փոքր լուսթիւն) Իր լրադրի խմբագրութեան անդամները... նրանցից, փառք Աստուծոյ, չեմ քաշում... Բայց եթէ հինգ կամ վեց անձինք լինեն, ինչպէս անցեալ օրն էր... Երբ նա սկսում է հրաւիրել... այլևս չափ ու սահման չը կայ նրա համար... Եւ միշտ նոր և նոր մարդիկ, որմնց չես ճանաչում... Այսօր էլ շարաթ է... հետեաբար... վաղը կիրակի... Ուրեմն նրանց այստեղ պիտի գիշերը պահես, պիտի գիշերային շապիկներ տաս... ի՞նչպէս անցեալ շաբաթ օրն էր... Ա՛խ, այս ի՞նչ բան է... (Նա խոր եւ երկար հառաչ է քաշում) Բայց ցաւն այն է, որ մի ամենահամեստ ճաշ է այս երեկոյ... երեկուայ մնացածը միայն... Ես վախենում եմ, որ հերիք չը տայ... (Ժերմեկնը մի շարժում է զործում) Այսու... այն, քեզ համար ծիծաղելի են ընտանեկան այս մանրամասնութիւնները... Ա՛հ, դու լաւ ես անում, որ չես ամուսնանում... Հրաշալի տուն կը պահէիր... Ո՞չ աւելի, քան երկու տարուայ մէջ դու բոլորովին քանդուած կը լինէիր... (Ժերմեկնը ծիծաղում է եւ շտկում chaise longue-ի վրայ) Ես չը գիտեմ՝ ի՞նչի վրայ ես դու ծիծաղում... Այստեղ ծիծաղերու ոչինչ չը կայ, ճիշտն առած...

ԺԵՐՄԵԿՆ. Ուզում ես, որ լաց լինեմ... (Ուզում է մագերը, որտեղից սանրը վայր էր ընկել) ... Այնպէս աւելի լաւ է... իմ տեսակէտից...

Տ. ԼԲՇԱ. Քեզ հետ անկարելի է երկու բոպէ... լրջօրէն... խօսել... (Փոքր լուսթիւն) Բայց ձանձրալի չէ, որ քո հայրը ինձ երբէք չէ նախազգուշացնում, թէ հետը հիւր է բերելու... Մի պարզ հասարակ բան՝ վերցրու, հեռախօսով յայտնիր... Սակայն ոչ... (Նորից հառաջում է) Բայց և այնպէս ես գուցէ մի ճուտ մորթել տամ... ի՞նչ կ'ասես...

ԺԵՐՄԵՆ. Քանի որ քեզ յայանի է, որ հայրս իր հետ միշտ հիւրեր է բերում, ամենաբնականն այն է՝ միշտ պատրաստի ճաշ ունենալ... (Նա խօսելիս բարձրանում է եւ վրդովուած բայրում վարդի թփերի մօտ):

Տ. ԼԲՇԱ. Զափեցիր, կարեցիր... Խակոյն երևում է, որ քո շինքին չէ տան ծանրութիւնը... Խակ եթէ հայրդ ոչ ոք չը բերէ, —չի՞ որ այդ կարող է պատահել, —ինչ անեմ ես այդ ժամանակ իմ այն ճուտը... Որքան էլ հարուստ լինենք, ես չեմ սիրում ուտելիքը իդուր փչացնել... Ես գարշում եմ կերակրի մնացորդից...

ԺԵՐՄԵՆ. Շներ կան...

Տ. ԼԲՇԱ. Երկնային բարութիւն...

ԺԵՐՄԵՆ. Աղքատներ կան...

Տ. ԼԲՇԱ. Աղքատներ... Ահ, խակապէս... ինչ-ինչ, բայց դրանք այս տեղերից միշտ անգակաս են... Ոչ մի երկրում ես այսքան աղքատ չեմ տեսել... (Ժերմէն կանդ է առնում վարդերի առջեւ եւ պոկում է մի թառամած վարդ) Ուղղակի գզուելի է...

ԺԵՐՄԵՆ. Ուր մի չափազանց հարուստ մարդ լինի, հէնց նոյն խակ այդ պատճառով նրա շուրջը կը լինեն չափազանց շատ աղքատներ...

Տ. ԼԲՇԱ. Դրա դէմ մենք ոչինչ չենք կարող անել... Այդ չէ նշանակում, որ նրանց մենք պիտի ճտի մսով կերակրենք... Եթէ աշխատեն, աղքատ չեն լինիլ...

ԺԵՐՄԵՆ. Եթէ աշխատեն... Ուր աշխատեն... Ի՞նչ գործ անեն...

Տիկ. ԼԲՇԱ. Ինչպէս թէ ինչ գործեն...

ԺԵՐՄԵՆ. Մենք խլել ենք նրանցից ամեն ինչ... Նրանց փոքրիկ պաշտպանները... նրանց փոքրիկ աները... նրանց փոքրիկ բանչարանոցները... որպէսզի ընդարձակենք, ինչպէս հայրս է անուանում, մեր կալուածքը... Ով որ կարողացել է, տեղից զնացել հեռացել է...

Տիկ. ԼԲՇԱ.... Հօ ձրի չենք վերցրել. —չի՞ որ վճարել ենք...

ԺԵՐՄԵՆ. Խակ ով որ մնացել է... (Նա վարդի թփից վերցնում է մի միջատ, ոտքով նրան ջարդում) Ահա...

Տիկ. ԼԲՇԱ. Քո հայրը տարով նրանց աշխատանք է առաջարկում... նրանք մերժում են... նրանք զերագասում են մուրալ... Դա իրանց գործն է...

ԺԵՐՄԵՆ. Իմ հայրս նրանց առաջարկում է տարով քաղցից մեռնել... նրանք...

Տիկ. ԼՀՇԱ... Ա՛հ, վերջապէս բաւական է... Ես էլ նըստել եմ, քեզ հետ վիճարանութիւն անում... Ինչ ես ասում... ԺԵՐՄԵՆ. Ոչինչ...

Տիկ. ԼՀՇԱ. Անհասկանալի է... Ես չը գիտեմ՝ ով է լցրել քո զլուխին այդպիսի յիմարտոթիւններով... (Զգուանքով) Պ. Լիւսիէն Գարրօն անկասկած:

ԺԵՐՄԵՆ. Պ. Գարրօն այստեղ ի՞նչ գործ ունի...

Տ. ԼՀՇԱ. Անտարակոյս... Մի մարդ, որ երբէք չի խօսում...

ԺԵՐՄԵՆ. Եթէ պ. Գարրօն երբէք չի խօսում, ուրեմն ինչպէս կարող էր նա իմ զլուխը լցնել...

Տ. ԼՀՇԱ. Իմ տաճները ես լաւ եմ հասկանում... Զը խօսողները աւելի շատ բան են ասում, քան նրանք, որ միշտ խօսում են... Բայց այդ՝ նա, քո Գարրօն ինձ դուր չէ գալիս...

ԺԵՐՄԵՆ. Քն... ի՞նչու... քո:

Տ. ԼՀՇԱ. Անշուշտ քո, որովհետև դուք միշտ միասին էք... Եւ մի երիտասարդ աղջիկ, ինչպէս զու ես... մի աղջիկ, որի հայրը տիրում է մի այսպիսի պատմական կալուածք, թոյլ տայ իրան լինել իր հօր գործակատարի, զրեթէ ծառայի հետ...

ԺԵՐՄԵՆ. Օ՛հ, ծառայի...

Տ. ԼՀՇԱ. Գրեթէ... Ես ասում եմ «գրեթէ»... Միթէ վայելու է այդ... Նա աւելի լաւ կ'անէ զբաղուէ մեր գործարանով և հողի պարատացումով... Ա՛հ... Ես չը գիտեմ՝ քո հայրը ո՞ր խորշից նրան հանեց բերաւ... Քիմիկնս... նա... քիմիկնս... Ինչպէս չէ... Արհեստական պարարտացում... (Նա զուխը շարժում է) Դա անշուշտ մի հոչակաւոր սուս է... Երբ նա եկաւ մեզ մօտ... նա նոյն իսկ շապիկ չ'ունէր... հագնելու... Վերջապէս.... (Լուսթիւն. Ժերմէն անհամերութեան նշաններ է անում) Բարձրագոյն Կենտրոնական գոլրոցիցն է... ի՞նչպէս չէ... Աւելի ձիշտը՝ Կենտրոնական խելազարատնից...

ԺԵՐՄԵՆ. Ա՛խ, մայրիկ... Միթէ կարելի է այդքան չարասիրտ լինել...

Տ. ԼՀՇԱ. Ես չարասիրտ չեմ... Բայց, ճիշտն ասած, երբ ես մտածում եմ, որ այս մասնաւոր մարդու համար շինում են մի ամբողջ պալիցլոն, մի լաբորատորիա, որոնք մեղ վրայ ահազին գումարներ են նստում... մինչդեռ ես երեք ամսից ի վեր է չեմ կարողանում ստիպել քո հօրը, որ կարգի բերել տայ մրգաստանը... Սա արդէն չափ ու սահմանից անց է... (Նա դործելը ընդհատում է եւ վերցնում ախոցները) Ժամի քանիմն է:

ԺԵՐՄԵՆ. Վեցից քառորդ անց...

Տ. ԼՀՇԱ. Ո՛րպէս արագ է անցնում ժամանակը... Քո

հայրը շուտով կը վերադառնայ... Ո՞ւմ հետ... Սատանան գիտէ... Զհաննամը... ես ծուտ չեմ մորթիլ տալ... Եղածով եռլա կը դնան... Ժերմէն։

ԺԵՐՄԵՆ. Ի՞նչ է...

Տ. ԼԲՇԱ. Ժամանակն է, գնա, ներքնատնից գինի բնր... ԺԵՐՄԵՆ. Ես քեզ արգէն ասել եմ... որ ներքնատուն ևս այլս չեմ դնալու... Դու ծառաներ ունես...

Տ. ԼԲՇԱ. Ծառաներ, որ միշտ գողանում են... նոյն իսկ գեռ երեկ հինգ շիշ պակսում էր... Եւ այդպէս ամեն օր... Սակայն ինչպէս են նրանք այդ անում, քանի որ բանալիները միշտ ինձ մօտ են։

ԺԵՐՄԵՆ. Եթէ դու նրանց աւելի հաւատ ընծայէիր, գուցէ և նրանք աւելի քիչ գողանային... Եւ վերջապէս ուրիշ ինչ կարող էին նրանք անել մի տան մէջ, ուր խօսում են միմիայն սրան-նրան խարելու մասին... Հանգիստ եղիր, նրանք երբէք չեն գողանալ այնքան գինու շներ, որքան միլիոններ են աշխատել ինձ ծանօթ մի քանի անձինք...

Տ. ԼԲՇԱ. (Բարկացած) Ժերմէն...

ԺԵՐՄԵՆ. Ինչու ես նեղանում... Ես ասացի՝ աշխատել...

Տ. ԼԲՇԱ. Ես քեզ արգելում եմ այդպէս խօսել... Մի քանի ժամանակից ի վեր դու արտասանում ես այնպիսի տարօրինակ բառեր... ընդունում այնպիսի դիրք, ընթացք... Ճիշտն առած, ես այդ տանել չեմ կարող...

ԺԵՐՄԵՆ. Իսկ ես այն տարիքից սկսած, երբ սկսել եմ հասկանալ և զգալ, ես հօ տանում եմ այն ամենը, ինչ որ այսուղ ասում ե անում են... Սակայն Աստուած դիտէ, թէ...

ՏԻԿ. ԼԲՇԱ. (Բռնաբար ընդհատելով) Լոյր... Այդ արգէն չափից անց է... (Նա բարկացած գործուածքը զամբիւղը խոթելով, զնում է սեղանի վրայ) Խօսքդ քո հօր մասին է, չէ՞... (Ժերմէնը լուր է, նա մի վարդ է պոկում եւ հոտոտելով զնում, նստում է chaise longue-ի վրայ) Լաւ, խօսենք պարզ ու բացարձակի...

ԺԵՐՄԵՆ. Ո՞հ... ես քեզ ինըդրում եմ... բաւական է...

Տ. ԼԲՇԱ. Ոչ, ոչ... ես ցանկանում եմ... Քո հայրը ունի շատ պակասութիւններ... մեծ պակասութիւններ... Նրանցից ես եմ առաջին առուժողը և ես եմ նրանց առաջին կշտամբողը... Նա մնապարծ է... վատնող..., ժապիհ... անխոհեմ... ստախոս... այս, նա ստախոս է և երբեմն խնդիր... այդ ամենը կարելի է... Որ նա յաճախ ուրանում է իր խօսքը... սիրում է խարել մարդկանց... Այս... գործերի մէջ... Բայց և այնպէս նա ագնիւ մարդ է... լսում ես... աղնիւ մարդ... Դնենք՝ թէ մինչեւ անգամ նա անազնիւ է. թէ նա վատերից ամենավատն է... Քեզ ինչ...

քո ի՞նչ գործն է... Քո հայրը քո հայրն է... նրան դատելը քեզ  
չէ մնացել...

**ԺԵՐՄԵՆ.** (Սառնօրէն) Ապա ում:

Տ. ԼԲՇԱ. Ի՞նչ ես ասում... (փոքր լոռնթիւն) Հա, հա...  
գու ուսերդ թօթուիր... (լոռնթիւն) Եւ իմացիր, որ իր հարըս-  
տութեամբ նա ոչ ոքի պարտաւոր չէ, ոչ ոքի... Հասկացար... Իր  
հարստութիւնը... նա աշխատելով է ձեռք բերել... Որ նա բա-  
րի աստղի տակ է եղել ծնուած... որ բախտը նրան ժպտացել  
է... Բարեպատեն անցքեր-հանգամանքները նրան օգնել են... Ես  
այդ ընդունում եմ... Սակայն նա աւելի իր հնարագիտութեան  
և եռանդին է պարտ... Թէ նա երկու անդամ սնանկացել է, բայց  
չէ որ նա կարողացաւ հաշտուել իր պարտատէրերի հետ... Թէ նա  
նա բանտ է նատել, սակայն միթէ նրան չ'արդարացրին... Ա՛հ,  
նրակիսի դժուար, դառն րոպէներ է ունեցել խեղճ մարդք... Նրա  
տեղ մի ուրիշը, աւելի պակաս եռանդի տէր մարդիկ վաղուց  
ինքնասպանութիւն գործած կը լինէին... Իսկ նա՝ ոչ... Իւրա-  
քանչիւր անկումից յետոյ նա բարձրացել, կանգնել է, որ աւելի  
շահի... աւելի մեծ բարձրութեան հասնէ... Եւ նա՝ որ հազիւհազ  
էր կարողանում գրել, մի մեծ լրազիր է հիմնում... Եւ վերջա-  
պէս առաջ իմնդրեմ, Կթէ քո հայրը սրբիկայ լինէր, միթէ նա  
կարող էր մինիստրի բարեկամը լինել...

**ԺԵՐՄԵՆ.** (Հեղնօրէն) Երկու մինիստրների...

Տ. ԼԲՇԱ. (Մի վայրինան աղջկան նայելով) Երկու մինիստրի...  
ճիշտ... Հըմ: (Վառուելով) Ես ևս՝ չնորհիւ իմ կարգապահու-  
թեան, իմ խնայողութեան, իմ խորհուրդներով... Ես ևս մի մաս  
ունեմ այս հարստութեան մէջ... որ գու արհամարհում ես... Ես  
պարծենում եմ... Ասա մի տեսնենք ախր է, ինչից զրդուած  
դու մեր պատճառով քաշւում ամաչում ես... Գուցէ որ մենք  
ժողովրդի միջից ենք դուրս եկած... որ մենք աղքատ ենք  
եղել... Գուցէ գրա համար է օրիորդը մեր անունից քաշւում,  
կարմրում... Տեսնում էք դուք այս ախմար փոքրիկին... այս  
գոռողին... այս դատարկ շատախօսին, որ իրան թոյլ է տալիս  
դատել իր ծնողներին...

**ԺԵՐՄԵՆ.** Աւելի լաւ է, որ դատովը ես լինեմ, քան ու-  
րիշները...

Տիկ. ԼԲՇԱ. Ատելի են, ատելի քո ասածները... Դու  
մի անզգայ, անողորմ աղջիկ ես... Եթէ մէկը քեզ լսէր... Ես  
այլ ես ոչ ոքի երես չէի կարող դուրս դաւ...

**ԺԵՐՄԵՆ.** Զարմանալի է, որ դու ինձ կշտամբում ես հէնց  
այն բանի համար, որ ինքդ կատարում ես ամեն օր...

Տիկ. ԼԲՇԱ. Ե՞ս...

**ԺԵՐՄԵՆ.** Այս, այս, դու... կարծես ուրիշների մօտ ինքդ քաշում ես հօրիցս գանգատուել... նոյն իսկ օտարների առջև բանում, ի ցայց ես հանում քո քէնը և նրա պակասութիւնները... Տեսնում ես, որ ես ինձ աւելի եմ զագում...

**ՏԻԿ. ԼԲՇԱ.** Ես... իմ բանը ջոկ է...

**ԺԵՐՄԵՆ.** Բնականաբար...

**ՏԻԿ. ԼԲՇԱ.** Ես բոլորովին չեմ հասկանում... Ի՞նչ է պատահել քեզ այսօր... Թեղ միայն մնում է դրդել ծառաներին, որ մեզ թալանեն... Այն ժամանակ ամեն ինչ թամամ կը լինի... Ուզում ես իջնել ներքնատուն... այս, թէ ոչ...

**ԺԵՐՄԵՆ.** Ոչ...

**ՏԻԿ. ԼԲՇԱ.** Շատ լաւ... (Նա բարձրանում է) Ես կերթամ... Ես... Զը նայած իմ ոսկրացաւին, ես կերթամ... (Գրգուած) Հը նայած իմ ոսկրացաւին... անսիրտ աղջիկ... (Նա դժուարութեամբ բարձրանում է սանդուղներով) Սնհաւատալի է... Ա՛հ, դու լաւ ես անում, որ չես ամուսնանում... (Նա կանգ է առնում, յնու նայում, յնուում վանդակապափ վրայ) Ի՞նչ ես դու այդտեղ շինում... Գնա, գոնէ հագնուիր... Գուցէ հիւրեր գան... ես չեմ ուզում, որ քեզ այգպիսի զղգղուած հազուստում տեսնեն... Իրօք, կ'ասեն, որ քեզ հազուստ չենք տալիս... (Ժերմէն լոռում է) Լսեցիր, հասկացար...

**ԺԵՐՄԵՆ.** Սյազէս էլ շատ լաւ է...

**ՏԻԿ. ԼԲՇԱ.** (Ուսերը վեր բաշելով) Սակայն դու զիտես... Եթէ ուզում ես ծաղրելի երևալ... Սնտանելի է, անտանելի... (Նա բարձրանում է տերրասը, գնում, նեռանում դէպի դղեալը):

(Ժերմէն շարունակ նայում է դէպ նեռուն՝ պարտէղները, անտաները, զաշտերը):

(Զախ իտլից մտնում է զվասւոր պարտիզպանը՝ կիրակնօրեայ շորերը հաղին):

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԲԱՆ

### ԺԵՐՄԵՆ, ՊԱՐՏԻԶՊԱՆ

(Ժերմէնին տեսնելով՝ պարտիզպանը զվասրկը վերցնում է եւ ձեռքերի մէջ շարժում, պատեցնում... Դէմքը՝ արեւից կիզուած, ձեռքերը թուխ, կոշտ, կապիտ, աշխատանքից տծեւացած... բյալուածքը երկուտ, արտասանութիւնը՝ յուզուած)

**ՊԱՐՏ.** Օրիորդ ժերմէն...

**ԺԵՐՄԵՆ.** (Նրա զուբը տեսնելով՝ զարմանում է) Ի՞նչ լաւ

էք հազնուած... Քէֆի էք ուրեմն գնում, իմ բարի ժիւլ...

ՊԱՐՏ. Քէֆի... Ա՛հ, օրիորդ Ժերմէն...

ԺԵՐՄԵՆ. Ճիշտ... Ինչու է ձեր գէմքը այդպէս ախուր... այդպէս շփոթուած... Դարձեալ մի նոր բան կայ, ասացէք...

ՊԱՐՏ. Ուրեմն օրիորդը ոյինչ չը գիտէ...

ԺԵՐՄԵՆ. Ո՛չ... ես ոչինչ չը գիտեմ...

ՊԱՐՏ. Հա... այդպէս... Ախր ես ասում էի... հակառակ դէպքում օրիորդը այսօր պարտէզ կը գար...

ԺԵՐՄԵՆ. Ինչու... այսօր...

ՊԱՐՏ. Որովհետեւ... որովհետեւ... օրիորդ Ժերմէն... ինձ համար դժուար է, ցաւալի է ասել... ես... եկել եմ ձեզիմ հրաժեշտս տալ...

ԺԵՐՄԵՆ. Հրաժեշտ... Այդ ինչ կը նշանակէ...

ՊԱՐՏ. (Գլուխը քաշ զցած, օրորուելով) Ես իմ պաշտօնը... թողնում եմ... Արդէն պարոնին... յայտնել եմ...

ԺԵՐՄԵՆ. Դժուք:

ՊԱՐՏ. Այն... օրիորդ...

ԺԵՐՄԵՆ. Անկարելի բան է այդ...

ՊԱՐՏ. Ո՛չ, օրիորդ... Այդ պիտի պատահէր... Ա՛հ, զրեթէ սպի մէջ եմ...

ԺԵՐՄԵՆ. Զեր պաշտօնը ձեզ այլ ես դուր չէ գալիս...

ՊԱՐՏ. (Շփոթուած) Ոչ, այդ չէ, այդ չէ... (Աւելի կենդանութեամբ) Ես ստիպուած էի, ստիպուած...

ԺԵՐՄԵՆ. Եւ ինչու...

ՊԱՐՏ. Պարոնի հետ ապրելու հնար չը կայ... Պարոնը շատ է խօսում... ամեն մի բանի համար նկատողութիւն է անում... Օրինակ, եթէ դիցուք, կանաչեղէնի ածուն և շինել եմ դէպի աջ... պարոնը պահանջում է, որ նա լինի դէպի ձախ... եթէ դէպի ձախ է... կը գոռայ, որ դէպի աջ լինի... Ել ինչպէս աշխատես... Բացի այդ՝ պարոնը տարօրինակ զաղափարներ ունի... Նրկար ժամանակ ես լուսմ էի... ոչինչ չէի ասում... Որովհետեւ ես չէի ուզում օր. Ժերմէնին թողնեմ, հեռանամ, որ այնքան բարի է եղել թէ ինձ և թէ իմ կոտը համար... բայց վերջապէս սիրտս շատ էր լցուել... չը համբերեցի...

(Ժերմէն լրջանում է և խորասուզում մտքերի մէջ):

ԺԵՐՄԵՆ. (Քիչ լուսինից յիտոյ) Ասացէք ինձ, ինչ է անցել ձեր և իմ հօր մէջ...

ՊԱՐՏ. Գրեթէ ոչինչ...

ԺԵՐՄԵՆ. Բայց և այնպէս...

ՊԱՐՏ. Միմիանց աւելորդ խօսքեր... իզուր տեղից տա-

քանալ... Միաժամանակ ես իմ հրաժարականը տուի, նա ինձ պաշտօնանակ արեց... Վճռուեց, որ ես այս երեկոյ կը հեռանամ... Գիտէք, երբ որ մի պաշտօնից հեռանում էք, աւելի լաւ է խկոյն և եթ...

**ԺԵՐՄԵՆ.** Դուք երեխ չափազանց դիւրազգայ էք... և անկասկած դուք սիսալ էք ըմբռնել հօրս ձեզ արած մի աննշան նկատղութիւն...

**ՊԱՐՏ.** Դիւրազգայ... Զորս տարի է, որ ես ծառայում եմ պարոնի մօտ... Ա՛հ, օրիորդ Ժերմէն... (Լոռութիւն) Ես կրթութիւն չ'ունեմ, դա ինձ շատ լաւ է յայտնի... Սակայն իմ արհեստը ես շատ լաւ գիտեմ... Մասերի կարաելը... ծաղկանոցը... ծաղիկները... Եւ ես սիրում իմ իմ արհեստը... Օրիորդ Ժերմէնը միշտ գոհ էր ինձանից...

**ԺԵՐՄԵՆ.** Դուք այդ լաւ գիտէք...

**ՊԱՐՏ.** (Խանդագորով) Կլեմատիսների փոքրիկ պարտէզը... **ԺԵՐՄԵՆ.** Որքան գեղեցիկ էր նա...  
**ՊԱՐՏ.** Եւ որքան հոգս է նա - մեզ պատճառել... Յիշում էք, օրիորդ... ճապոնական չուշանները... մեծ աւազանի ափին... Դա ձեր գաղափարն էր...

**ԺԵՐՄԵՆ.** Այս... այս...

**ՊԱՐՏ.** Իսկ ծաղկանոցը, ուր օրիորդը ամեն օր զնում, փնջեր էք քաղում... (Լոռութիւն) Փնջեր շինելը սակայն դուք էիք, օրիորդ Ժերմէն, որ ինձ սովորեցրիք... Իսկ վարդերը... ապա սերմելու տեղերը... բոլորը, բոլորը...

(Փոքր լոռութիւն)

**ԺԵՐՄԵՆ.** Բայց դուք մտածել էք արդեօք, որ այդ ամենը այժմ թողնում էք:

**ՊԱՐՏ.** (Տիտուր շարծուածք է գործում) Քանի որ օրիորդ Ժերմէն ինձանից գոհ է եղել, ես այժմ տեղիցս հեռանում եմ աւելի թեթացած սրտով...

**ԺԵՐՄԵՆ.** Ասացէք տեսնեմ, գուցէ մի թիւրիմացութիւն է. կարելի կը լինի հեռացնել, ցրուել... Ես այս երեկոյ հօրս հետ կը խօսեմ...

**ՊԱՐՏ.** Ծնորհակալ եմ, օրիորդ... Եղածը... Եղած է...

**ԺԵՐՄԵՆ.** Սակայն...

**ՊԱՐՏ.** Վաղը միենոյն բանը կամ մի ուրիշ բան կը լինի... Ո՛չ... արդէն վերջացած է... (Ծանրակշիռ կերպով, լրջօրէն) Նախ... (Մնում է լուռ):

**ԺԵՐՄԵՆ.** Ի՞նչ է... Ասացէք...

**ՊԱՐՏ.** Նախ... (Աւելի շփոթուած կերպով պտտեցնում է զլխարկը) Քարը զլուխը... Ես օրիորդին պիտի ամեն ինչ յայտնեմ...

Օրիորդ, ներեցէք համարձակութեանս, ամօթը դէն, գուք դիմէք, որ իմ կինը յղի է...

ԺԵՐՄԵՆ. Անկասկած... լաւ ուրեմն;

ՊԱՐՏ. Որ երկու ամսից յետոյ նա պիտի ծնէ...

ԺԵՐՄԵՆ. Այս...

ՊԱՐՏ. Է՞ս ուրեմն... ահա... Պարոնը չէ կամենում, որ իր մօտ երեխաներ լինեն... «Սուն ինչ խորհել, կշռելոց յետոյ,— ասաց նա ինձ այս առաւօտ,—վճռել եմ ոչ մի երեխայ չը պահել այստեղ... Երեխաներ... անկարելի է... Երեխաները փըշացնում են խոտը... Կեղտոտում ծառուղիները... Խրանեցնում ձիերին»... (Լուլեին. Ճերմէն յուզուած, ամօթխած, գլուխը թիզ շուռ է տալիս) Անտարակոյս երեխաները հօ մարդս դիտմամբ չէ ունենում, իր գուարձութեան համար... Ահ... մեզ քաջ յայտնի է մեր գրութիւնը... Ծայրը ծայրին հասցնելով՝ հաղիւ հազ ենք կարողանում երկու գլուխ պահել... բայց եթէ երեխաներ են լոյս-աշխարհ գալիս... սակայն ասացէք խնդրեմ, օրիորդ ժերմէն, հօ չէ կարելի նրանց սպանել...

ԺԵՐՄԵՆ. (Կարծես ինըն իրան խօսելով) Ահա քեզ պատճառ...

Այժմ դուք ինչ պիտի անէք...

ՊԱՐՏ. Պիտի դնամ պաշտօն որոնեմ... Այժմ էլ տարուայ վատ ժամանակը... Գործի, աշխատանքի ժամանակ... լաւ տեղերը բոլորն էլ բռնուած... Մի յղի կնոջ հետ միասին պիտի սրա-նրա դռները բաղսենք, տեսնենք՝ ուր, որտեղ ենք դործ ճարում... Դիւրին բան չէ... ահ, Աստուած զիտէ, զիւրին բան չէ...

ԺԵՐՄԵՆ. Իսկ մինչև այդ... Գոնէ խնայած բան ունէք...

ՊԱՐՏ. Ես ձեռքեր ունեմ...

ԺԵՐՄԵՆ. (Յուզուած) Իմ խեղճ ժիւլ... Ես ոչինչ չեմ կարող անել ձեզ համար... Ես կարող եմ միայն խղճալ և սիրել ձեզ. (Նա տեղից բարձրանում... բռնում է նրա ձեռքը) Գնաք բառ բով...

ՊԱՐՏ. (Մի բանի վայրկեան մնում է սաստիկ յուզուած...) ոչինչ չի ասում... չի էլ վճռում հեռանալ) Օրիորդ ԺԵՐՄԵՆ... Ես կը կամենայի ձեզ մի բան ասել... (Նա ցոյց է տալիս իր կոկորդը) Մի բան, որ այստեղ է... Ես չեմ համարձակուում...

ԺԵՐՄԵՆ. Ասացէք... խնդրում եմ...

ՊԱՐՏ. (Ձայնը դողդողալով) Օրիորդ Ժերմէն... գուք նոյնպէս... դուք ևս բախտաւոր չեք...

ԺԵՐՄԵՆ. Դուք սիստում էք... Ես շատ բախտաւոր եմ...

ՊԱՐՏ. (Վլուխը թօթուելով) Ո՛չ, օրիորդ... Ես ձեզ ձանա-

չում եմ... ձեր սրտի նման սիրտ ունեցողը... չի կարող այս-  
տեղ բախտաւոր լինել...

(Նա մի բանի բավլ է անում, որ գնայ)

**ԺԵՐՄԵՆ.** (Գուշիք թիչ խոնարհներած) իսկ ձեր կինը,

**ՊԱՐՏ.** Քաղաքումն է, գնացել է կառք բերելու, որ մեր  
կահ-կարասիք, մեր ունեցած-չունեցածը տանենք...

**ԺԵՐՄԵՆ.** Ի՞նչու... Այսաեղ կառքեր պակաս չեն...

**ՊԱՐՏ.** Իւրաքանչիւրը իր համար... Այդպէս աւելի  
լաւ է...

**ԺԵՐՄԵՆ.** Կը տեսնեմ ես արդեօք ձեր կնոջը;

**ՊԱՐՏ.** Ա՛հ, անտարակոյս... Այս առաւտնանից տանը  
թախկ-թրուխկ, իրարանցում... Գիտէք, օրիորդ, ժամանակ  
չունեցաւ...

**ԺԵՐՄԵՆ.** (Շատ յուրուած) Երթաք բարով...

**ՊԱՐՏ.** Մնաք բարով, օրիորդ...

(Գուրս է գնում նա ծանր բայլերով... Անցնելով ծաղկոցի եզրի մօ-  
տով նա ըստ սովորութեան ուղղում է բոյսերից մէկը, որ ծոռւած էր):

### ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

**ԺԵՐՄԵՆ,** յետոյ Տիկ. ԼԲՇԱ, ապա Լիկուիէն ԳԱՐՐՕ

(Ժերմէն նորից նստած է chaise longue-ի վրայ, շատ տիսուր  
է: Սիզում նա մեքենայաբար մի գիրք է թերթում, յետոյ փակում, զուխը  
յենում ծեռքերի վրայ, աչքերը յառում դետնին... Նախասենեակից լսում  
է տիկ. Լըշայի կաղկանճիւն ծայնը)

**Տ. ԼԲՇԱ.** (Գուրս գարով սանդուղքի ծայրը եւ դառնալով զէպի  
գաւիթը) Ո՞ւր են սրանք... Ի՞նչ են շինում... Նախասենեակում  
նչ մի ծառայ... Անհաւատալի է այս... (Նա սկսում է սանդուղք-  
ներից իշնել) Որքան շատ պահես այս ցեղից, այնքան էլ քեզ  
վատ կը ծառայեն... (Նկատելով Լիւիէնին, որ մտնում է ազ կողմից,  
նա կանգ է առնում) Ա՛հ, պարօն Գարրօ, այժմ... (Ժերմէն բարձրա-  
նում եւ պատասխանում է Լիւիէնի բարեւին... Տիկ, Լըշա Թշնամական  
ծայնով, որով կարծես կամենում էր Լիւիէնին հնուացնել) Իմ ամու-  
սինս գեռ չէ վերադարձել, պարօն Գարրօ...

**Լիկուիէն.** Ներեցէք, տիկին... Կառքի ձայն եկաւ, և  
կարծեցի՞ թէ նա է...

**Տ. ԼԲՇԱ.** Դուք սիսալուել էք... (Իշնում է մի աստիճան եւ  
կանգ առնում) Իմ ամուսնուն բան ունէք ասելու:

**Լիկուիէն.** Այս, տիկին:

**Տ. ԼԲՇԱ.** (Իր աղջկան) Դու նոյն իսկ չես կարող գալ

ինձ օգնել՝ սանդուղքներից իջնեմ... (Ժերմէն զնում, օգնում է) Փառք Աստուծոյ... (Լիւսիէնի մօտով անցնելիս) Այս ծառաները... տեսնուած բան է... Ես յոյս ունեմ, որ քո հայրը նրանց բոլորին էլ խելքի կը բերէ...

ԺԵՐՄԵՆ. Որպէս այն խեղճ ժիւլին...

Տ. ԼՐՇԱ. (Իր աղջկայ ձայնով) Այն խեղճ ժիւլին... Բնականաբար... Դու կարող ես խղճալ միայն ծոյլերին, արբեցողներին... և գողերին...

ԺԵՐՄԵՆ. Ոչ բոլոր...

Տ. ԼՐՇԱ. (Բարկացած նայելով աղջկան). Հըմ... Բաւական է, որ ծառաները միայն մի տարի մնան մի տեղ, նրանք արդէն աղաներ են գառնում... Կարծես դու այլ ևս քո տանը չես... (Իր աղջկայ ձայնով) Այն խեղճ ժիւլը... (Այդ ժամանակամիջոցին նա ժերմէնի օգնութեամբ իջնում, հասնում է իր բազկաթողին եւ նսում) Ուռիք... (Քիչ շունչ է առնում եւ նորից սկսում իր զործուածքը) Երբ մտածում եմ, որ այս հասակում, այս դրութեան մէջ... ես պիտի ամեն երեկոյ գնամ ներքնատուն... Ա՛ն... աշխարհս փոխուել է, փոխուել... (Գործում է կատաղած) Է՛հ ուրեմն, պարոն Գարրո...

ԳԱՐՐՈ. Տիկին...

Տ. ԼՐՇԱ. Այդ ինչ խենթ աւ մենթ գործեր էք անում իմ ամուսնու հետո... նրա գլուխը զանազան յիմարութիւններ խորթում... կարծես, նա ինքը պակաս խենթութիւններ ունի...

ԼԻՒՍԻՆ. Ե՞ս..., տիկին:

Տ. ԼՐՇԱ. Էլ ուրիշ ով կարող է լինել... Նա ուզում է յեղափոխել երկրագործութիւնը... Այժմ նրա ուշը-միաքը միայն դա է... Այլևս էլ ոչ ցորեն, ոչ վարսակ, ոչ ճակնդեղ... Նա ասում, պնդում է, որ դա մաշուել, հնացել է... որ դա այլևս ժամանակակից, modernne չէ... Ի՞նչ կ'ասէք... Հըմ... նա երազում է սերմել չը զիտեմ ինչ...

ԼԻՒՍԻՆ. Կատարելապէս ճիշտ է այդ... Միայն դրա պատճառը ես չեմ: Բնդիակառակը, ես ամեն միջոց գործ եմ դրել ապացուցանելու պարսն Լըշային իր սխալը... Նա լսել անգամ չի ուզում և ինձ անուանում է բուրժուա... (Ծիծաղելով) Նյոյն խեկ տղէտ, յետադէմ բուրժուա...

Տ. ԼՐՇԱ. Դուքք, կամենում էք ինձ համոզել, որ իմ ամուսինս խենթ է...

ԼԻՒՍԻՆ. (Բողոքելով) Օ՛հ, տիկին... Սակայն պ. Լըշա շատ յանդուգն է... նորոգիչ... և շատ յամառ...

Տ. ԼՐՇԱ. Այս, այն... Եւ որքմն գումարներ մեզ պիտի

նստէ այդ պարարտացման գործը, այն անօգուտ և ծաղրելի փորձերը... Հազարներ, տասնեակի հազար փրանիներ...  
ԼիիՍիէն. ես երկիւղ եմ կրում...

Տ. ԼԲՇԱ. Ահ, շատ չորհակալ եմ... Այժմ հողի մշակութեան նոր սիստեմը... ապա մի երկու ամսից յետոյ՝ պատգամաւորական ընտրութիւններ... Հիանալի տարի կ'ունենանք... ասել չէ կարելի...

ԼիիՍիէն. (Շատ մեղմ կերպով) Յիշում էք, տիկին, անցած ամիս տեղական տօնի համար պ. Լըշա ուզում էր ազգային եռագոյնով ներկել տալ մեծ ծառուղու դարաւոր և հրաշալի կնձենիների բուները... Բարերախտաբար դուք նրան յետ կանգնեցրիք այդ դիտաւորութիւնից... Գուցէ ձեզ յաջողուի, — ես այդ սրտանց եմ ցանկանում, — յետ դարձնել նրան և հողագործական իր այդ մեծ յեղափոխութիւնց...

Տ. ԼԲՇԱ. (Մտախոն, գործելը ընդհատում է) Ազգային գոյներով ներկել... մեր գեղեցիկ կնձենիները... Սակայն այդ ձիշտ է... Այդպիսի մարդու հետ անկարելի է մի բուգէ հանդիսաւ մնաւ... (Լուսիէն) Բայց վերջապէս դուք, պ. Գարրօ, որ այդքան գիտուն էք... գուք ինքներդ ինչով էք բայցատրում իմ ամուսնու այդ տարօրինակութիւնները... Զ՞ որ ամուսինս խելացի է, բանիմաց... ամենայն իրաւամբ... փառաւոր անուն, հոչակ ըստացած իրեն գործնական մարդ, առաջինը Պարիզի մէջ...

ԼիիՍիէն. Սյո, այդ անվիճելի է...

Տ. ԼԲՇԱ. Իսկ իր այդ գործերից գուրս... Նրա ասած-աւրածները տիմարութիւններ են. (Լիւսիէն բողոքում է) Այս, այն, միմիայն տիմարութիւններ...

ԼիիՍիէն. (Զգուշաբար) Ճիշտն ասած, տիկին, ես շատ գժուարանում եմ ձեզ պատասխանել... Սակայն պ. Լըշայի օրինակը յաճախ կարելի է հանդիպել խոշոր գործեր շարժող մարդկանց շրջանում... Ծայրայեղ ինքնավստահութիւն, սովորութիւն տիրապետել և յաջողել... Պահանջ ստեղծելու մի որեէ նոր բան... Արբեցուցիչ հրճուանք արգելքներ յաղթելու... Ես չը դիտեմ... (Քաշուելով) Մի քիչ չափազանց գոռոզութիւն... գուցէ և իդէալի պահանջ (նա ձեռքով մի անորոշ շարժուածք է անում):

Տ. ԼԲՇԱ. Օհ, իդէալի...

ԼիիՍիէն. Երաքանչիւրը իր իդէալն ունի... Միայն չէ կարել երկիրը, հողը այնպէս մաժել, նրա հետ այնպէս վարուել, ինչպէս վարւում են մարդկանց խեղճ ոգու հետ... Երկիրը աւելի քիչ է ձկուն և աւելի շատ դիմացկուն, դիմադըրող...

**S.** ԼԲՇԱ. (Հառաջելով) Իհարկէ... Սակայն ես կարծում էի, որ դուք մի որոշ ազդեցութիւն ունէիք իմ ամուսնու վրայ...  
ԼիիՍիէն. Ոչ մի ազդեցութիւն, տիկին...

ԺԵՐՄԷՆ. Պ. Գարրօն շատ ազքատ է... շատ ճշգրիտ...

**S.** ԼԲՇԱ. (Խրստ հայեացք զգելով աղջկայ վրայ) Ես քեզ հետ չեմ խօսում... (Վւում են կառքի բռժուների հնչիւններ... նա ականջ է զնում) Ես կառքի ձայն եմ լսում... Այս անգամ նա է...  
ԼիիՍիէն. Ես դնում եմ պ. Լըշային հանդիպելու:

**S.** ԼԲՇԱ. (Աղերսագին ձայնով) Սշխատեցէք նրան հասկացը նել... (Վւսէն զլուխ է խոնարհում եւ դուքս գալիս):

## ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՑԻԿ. ԼԲՇԱ, ԺԵՐՄԷՆ

**S.** ԼԲՇԱ. (Սաստիկ յուզուած՝ զնում է իր գործուածքը զամբիւղի մեջ) Ո՞ւմ է, եարաք, քաշել բերել Պարիզից... Ո՞ր ժամն է... (Ժերմէնը լուսմ է) Ո՞ր ժամն է...

ԺԵՐՄԷՆ. (Հակիրճ) Ես չը գիտեմ...

**S.** ԼԲՇԱ. Բնականաբար... (Նա ուղղում է իր ժանեակների և հազարի ծալուածները) Իմ ձեռնոցները... Ա՛խ... (Տեսնելով նրանց սեղանի վրայ, նա վերցնում է եւ շտապով հազնում) Իսկ գու... մազերդ քեզ կարգի բեր... Մի անո՛ ինչի ես նման... հագուստի թիկունքիդ վրայ ուռամձ... Եկ այստեղ. (Ուղղում է նրա շորերը) Այս հասակումդ իսկ գու հազնուել գեռ չը սովորեցիր... Ա՛հ, դու պատիւ չեմ բերում քո մօրը... (Նփոթուած) Իսկ իմ ընթըրբիքը, օհ Աստուած իմ... Մայն թէ նշանաւոր մարդիկ չը մինեն... Այդ էր պակաս... Երբ մտածում եմ, որ այս չարսաւանայ մարդը միեւոյն ահ ու գոզն է գցում ամեն երեկոյ... (Բոժօնների հնչիւնները դադարում են: Կուլիսի յետեւից աղմկափ ձայններ են լսում):

ԶԱՅՆԵՐ. (Կուլիսի յետեւ). Կեցցէ իսիդոր Լըշա... Կեցցէ քաղաքացի իսիդոր Լըշա...

**S.** ԼԲՇԱ. Ահա նա դարձեալ մեր ազարակի բանուորների կեցցէներով է իրան ընդունել տալիս... Ուրեմն նրա հետ անկասկած մի մինիստր է եկեղել, երկրագործութեան մինիստրը, որ շարունակ գալիս է մեզ մօտ.—Ասառած իմ...

ԶԱՅՆԵՐ. (Կուլիսի յետեւ) Կեցցէ իսիդոր Լըշա...

ԻՍԻԴՈՐԻ ԶԱՅՆԵՐ. (Կուլիսի յետեւ) Լաւ, լաւ... Գլխիցս ուազ եղէք... (Աղաղակները սաստկանում են: Բնմի խորքի աջ կողմից երեսում

է Խսիդորը, միայն պրոֆիլը, յետ-յետ գալով նա խաղաղուելու նշաններ է անում) ԱՇ, սատանան տանիք... Գլխիցս ոսդ եղէք... Ոչ թէ մարդուն պիտի փառաւորէք, կեցցէներով ընդունէք, այլ գաղա-փարը... Մեծարեցէք գաղափարը...

**ԶԱՅՆԵԲԻ.** (Կուլիսի յետեւից) Կեցցէ կափոր Լըշա...

ԻՍԻԴՈՐ. Դէ՞ն, լաւ... կորէք... Ահա, վերցրէք,—սա էլ գաղափարի համար (Նա սու\*) եւ սպիտակ փողիր է նետում). Եւ զիսիցս ոսդ եղէք... Բաւական է... (Նա շուռ է գալիս) ԱՇ... տիկնացք... Մի գաշտային տեսարան... արժանի Վաստօն\*\*)

վրձինին... բարի երեկոյ, իմ երեխայքա: (Նա բոլորովին մտնում է,

նրան նետեւում է լիւթին: Ապա գալիս են Ֆինկ, Գրուզ եւ մի որոշ

տարածութեան վրայ սրանց հետեւում են երկու սպասաւոր՝ իւրաքանչիւ-

րի ծեռքին մի պայուսակ եւ մի վերարկու:)

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍՍ.ՐԱ.Ն

**ԻՍԻԴՈՐ ԼՐԾԱ, ԼԻՒՍԻԷՆ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԶ, ՏԻԿ, ԼՐԾԱ, ԺԵՐ-ՄԷՆ և ԵՐԿՈՒ ՍՊԱՍՍԱՀՈՐ**

(Խսիդոր գլուխը ծածկած յարդէ գլխարկով, հագին մի սեւ, շատ երկար եւ շատ լայնարձակ ժակիտ, որի զրպանները լրազիրներով լցրած, բաց հաւանա (ծխախոտազոյն) ափիկէի ժիկտ, որի վրայ պասդում է հաստ ոսկէ շղթայ, միխրազօյն պանտարոն, դեղին կօշիկներ... Կլորիկ փորով, զուենիկ արտաքինով խոշոր մարդ. Նրան նենդ եւ կասկածուտ աչքերը, ծուռ հայեացը մի տարօրինակ հակապատկեր են կազմում բայլուածքի ոստոս-տուն շարժականութեան եւ անդազար երերուող շարժումների հետ... Մօ-րուքը այեփառն, կարճ եւ կոշտ, աւելի է շիշտում, աչքի զցում նրա քերանի նեղուածքը, զայլի սպիտակ ատամներ, գիշակերի ամուր ծնօտ...)

Տիկ. Լըշա տեղից բարձրացել է, որ ընդունէ ամուսնու հրաժ-րածներին: Տեսարանի սկզբում նրա անհանդիստ աչքերը Ֆինկի եւ Գրուզի վրայից զնում ընկնում են երկու պայուսակների վրայ, որ զըտ-դում են սպասաւորների ծեռներին):

**ԻՍԻԴՈՐ.** (Ֆինկին եւ Գրուզին՝ գուղաքար եւ թեթեւ հեգնու-թեամբ) Կատաղած են, կատաղած այս անպիտանները... ԱՇ, գաղափարը յառաջադիմում է այստեղ... պատւական մարդիկ: (Յանկարծ հանելով ժամացոյցը, նայում է) Տասն և հինգ րոպէ... Երկաթուղու կայարանից մինչև դղեակը, զաւակներս, մանք անցել ենք տասն և հինգ րոպէում... Ժամը քսան չորս կիլո-

\* ) Տօւ=Ե սանտիմանոց:

\*\*) Քրանսիացի յայտնի նկարիչ (1684—1721 թ.):

մեար... ձիերով... Հէ, հէ... բնչ կ'ասէք, լաւ է, չէ... (Ֆինկ եւ գրուգ հաւանութիւն են տալիս: Դառնալով Լիւսիէնին) Իսկ մեր պարաբռացման գործը...

Լիիլիկն. Եոր ոչինչ չը կայ...

ԻՍԻԴՈՐ. Sapristi... Իմ սիրելիս, շտապեցէք, շտապեցէք...

Մեր գիւտի մասին ես արդէն յայտնել եմ երկրագործական Ընկերութեան, Մելինին... բոյորին... Ես արշաւանք եմ սկսում Petit Tricolore թերթի մէջ... Վերջապէս դա ինձ անհրաժեշտ է ընտրութիւնների համար... աշխատեցէք... աշխատեցէք... (Ներկայացնում է իր բարեկամներին կնոջը) Պարոն Թինկ... Պարոն... (Տատանում է... աշխատում է յիշել անունը)

ԳՐՈՒԴ. Գրուգ... Վկլէելմ Գրուգ:

ԻՍԻԴՈՐ. Գրուգ... հա ճիշտ... Գրուգ... Քիչ էր միացել մոռանում էի նրա անունը... (Հանդիսաւոր կերպով) Պարոն Գըրուգը... (Բարեւում են)

Տ. ԼՇԵԱ. Պարոնայք...

ԻՍԻԴՈՐ. Ելեկարո-տեխնիկներ... իմ բարեկամները... հին բարեկամներ... (Զարկում է մէկի եւ միւսի ուսերին, երեքն էլ ծիծաղում են) Լաւ նայիր այս կտրիճներին... Սրանք երկուսը միասին ներկայացնում են տասը հազար ձիու ոյժ...

Ֆինկ. Ներողութիւն, քսան հազար...

ԻՍԻԴՈՐ. Քսան հազար ձիու... Քսան հազար ձիու ոյժ ունեցող մի ջրվէժ... Ա՞հ, կտրիճներ... (Ներկայացնելով իր կնոջը)... Տիկին իսպիդոր լըշա... իմ կինը... (Նորից բարեւներ):

Տ. ԼՇԵԱ. Պարոնայք...

ԻՍԻԴՈՐ. Օրփորդ Ժերմէն իսփոր լըշա... իմ աղջիկու (Բարեւումներ: Ճերմէնը թեթեւ կերպով խոնարհում է զլուխը) Հիւանալի ձեռնտու հարսնացու... ահ, ահ... Կամակոր երբեմն. բայց բարեսիրատ... ինչպէս իր հայրը... Եւ խելօք, կրթուած... ժամանակակից հիւանդութիւն... ժամանակակից հիւանդութիւն... Այնպէս չէ, աղջիկս... Կոտը ընկած դքսերը և առանց գրու իշխանները կարիք չ'ունեմ՝ ովկիանուը կտրկով գնալ Ամերիկա հարուստ օժիտիք... Ամերիկան այսահեղ, իրանց մօտն է... Ա՞հ... ահ... ահ...

ԺԵՐՄԷՆ. Ախ, հայր իմ, բաւական է, խնդրում եմ...

ԻՍԻԴՈՐ. Եւ համեստ... լաւ... լաւ: (Լքագրերը գրպանից հանելով բաժանում է իր կնոջը, աղջկան, Գարրօին) Իմ զաւակներս, մի երևելի համար է այսօրուայ համարը... Այստեղ մի յօդուած կայ... ցորենի մասին... Մենք այն պիտի ոչնչացնենք բոլորովին... (Գարրօին) Կարդացէք... (Գարրօն բանում է թերթը) Երկը րորդ երեսի վրայ, երեք սիւնեակ... ստորագրած՝ Պարսիֆալ

(Կնոջը) Դա քո պրոտեժէն է... փոքրիկ Բամպօն... Ո՞րպիսի յառաջադիմութիւն է անում... այս փոքրիկ Բամպօն... Հիանալի բնաւորութիւն... Եւ ինչ գրիչ...

Տ. ԼՀՇԱ. ԶԷ որ ես քեզ ասացի... որ նա հեռու կը գնայ... ԻՍԻԴՈՐ. (Գրուզին եւ Ֆինլին) Երեակայեցէք... Նա սկսել է ինձ մօտ... անցեալ տարուանից... Նախ տեղեկութիւն էր տալիս եղանակի մասին... Յետոյ ես նրան յանձնեցի Թատրոնական Արձագանգները... իսկ այժմ... ես նրան փորձում եմ քաղաքատընտեսութեան մէջ... Հրաշալի է նա այդտեղ... Որովհետեւ... գիտէք... իմ լրագրի մէջ ինձ հարկաւոր չէ ոչ զրականութիւն... ոչ զրողներ և ոչ էլ նրանց ֆրազները... Օհ ոչ, երբէք... ինձ հարկաւոր են պարզ բաներ... իրողութիւն... փաստեր... և փող... Ահա բոլորը...

ԳՐՈՒԳ. Թերթը... դա անկասկած մի մեծ բաւականաւթիւն է...

ԻՍԻԴՈՐ. Ո՛չ, դա մի լծակ է... (Միւս թերթերը զնում է սեղանի վրայ եւ տեսնում է հեռագիրը) Ո՞ւմնից է այս հեռագիրը (Վեցնում է հեռագիրը):

Տ. ԼՀՇԱ. Քսաւիէից:

ԻՍԻԴՈՐ. Ահ... ահ... (Կարդալուց յետոյ) բրաւօ... (Հեռագիրը ձեռքին ճօնելով) Ես ձեզ ներկայացնում եմ Քսաւիէ իսիդոր Լըշա Դը Վոպերգիւ... իմ որդին... մի իսկական կտրիճ և մօդեռն կտրիճ... Նա է սկսում Վոպերգիւի տոհմը... (Հեղնական գոռզութեամբ) Լըշա Դը-Վոպերգիւ... Սակայն վազը դուք նրան կը տեսնէք...

Տ. ԼՀՇԱ. (Աղեկէզ) Ուրեմն... այս պարոնները գիշերը մեզ մօտ են պառկելու...

ԻՍԻԴՈՐ. Իհարկէ... պառկելու են... հօ թառ չեն լինելու... (Ֆինլին եւ Գրուզին) Դուք իմ որդուն ճանաչում էք:

ՅԻՆԿ. Ո՛չ...

ԳՐՈՒԳ. Ո՛չ...

ԻՍԻԴՈՐ. Ինչպէս թէ... ոչ... Սակայն նա շատ լաւ յայտնի է... Սպորտի թերթերը հէնց միմիայն նրա մասին են խօսում... Նա ձիեր է պահում ձիարշաւի համար... ունի մի զրօսանաւ... մի աւտոմոբիլ, որ արժէ յիսուն հազար ֆրանկ... բարեկամներ ունի հասարակութեան բարձր շրջաններում... Եւ նրան են նաև Պարիզի ամենագեղեցիկ գերասանուհիներ... Քսան և մէկ տարեկան է միայն անգամը և արդէն երկու-երեք

շիկ սկանդալներ է ունեցել... ԶԷ որ նա Երատան\*) ընկերութեան անդամ է...»

Տ. ԼԲՇԱ. Եւ շատ ուրիշ բաների... Եւ նրբան հոգս է մեզ պատճառում... ինձ... զլխաւորապէս... Որովհեան այդ երեխան, պարոններ... հօր աչքի լոյսն է... Խափորը նրան թոյլ է տալիս ամեն բան (Խսիղորը հրճում է եւ ծեռքերը իրար շփում):

Եւ լակուց գրանից օգտում է... Աստուած դիտէ՝ ինչպէս... ԻՍԻԴՈՐ. Զուարճանում է փոքրիկ ստահակը, զուարճանում... ԶԷ որ տարիքն է...»

Տ. ԼԲՇԱ. Նա կարող է զուարճանալ աւելի պակաս ծախսերով, մանաւանդ որ նա այնպիսի գեղեցիկ տղայ է...»

ԻՍԻԴՈՐ. Իմ խեղճ պառաւ... Դու շարունակ գանգատում ես... Ի՞նչ կայ... Ես այնքան հարուստ եմ, որ որդուս փառքի համար կարող եմ իր ուղածի չափ շռայլել... Քսաւիէի նման տղան Պարիզի մեծ կեանքի մէջ... Կարծես՝ թէ դու ինքըդ բաղդաւոր չես զգում քեզ, երբ լրագիրներից իմանում ես, որ քո երեխան է իր աւտոմոբիլով առաջնորդել Sockeye-Club-ը Օսահնդէ... Մայրական սիրտ ինչ է ասում... թշուառական...»

Տ. ԼԲՇԱ. Ես ոչինչ չունեմ... Եթէ միայն դա աւելի քիչ փող նստէր...»

ԻՍԻԴՈՐ. Կաւ էս... (Գրուզին եւ Ֆինլին) Նա նոյն իսկ չի ըմբռնում, որ Քսաւիէն իմ գործերիս համար մի յարատե և կենդանի բեկլամ է... (իր կրոջը) Այ օրհնուած, բաս գու երբէք չը պիտի հասկանաս, որ որդուս տուած փողը հարիւրին հարիւր տոկոս է բերում... Ա՛խ, այս կանաքը, կանաքը... Զգացմունք... որքան որ կուզես ։ բնլ-բնլ... իսկ գործեր... (Նա թօթում է ուսերը, քայլում, յուզում, ծնորերն իրար շփում... Ժամացոյցը հանում) Ա՛յ... Ես զրազ կը գամ՝ ինչ էլ կամենաք, որ այն դուքս Դը Մոժին գեռ չի հասել Մարեկուր. այն երկար, ուղտաննան դուքսը, որ ես ձեզ ցոյց տուի երկաթուղու կայարանում... Ես սպասում եմ, տեսնենք ով կարող է իմ ձիերից առաջ ընկնի... Ի՞նչ կատէք իմ ձիերի մասին... հըմ...»

ԳՐՈՒԳ. Զարմանալի են...

ԻՍԻԴՈՐ. (Երա ուսին զարկելով) Քսան և ութ հազար... իմ բարեկամս...»

ԳՐՈՒԳ. Զարմանալի են...

ՑԻՆԿ. Եւ մամբին, տիկին, մենք գեռ մի ոչխար էլ ջարդեցինք...

\*) Ապշեցնող:

ԻՍԻԴՈՐ. (Թնդական գոռզութեամբ) Երկու ոչխար... երկու; (Զեռքերը շփելով) Անցեալ շաբաթ, Աստուած վկայ, ևս տապաւեցի մի կով իր հորթի հետ... նոյն իսկ քիչ էր միացել, որ մի երեխայ էլ ճմլէի, ճամբայ շտկողի երեխան...»

Տ. ԼՃԾԱ. Դու գրանով չը պիտի պարծենաս...»

ԻՍԻԴՈՐ. Ի՞նչ կայ այստեղ... փոխարէնը ևս վճարում եմ: (Նա ծեռքերը շփում է) Այն ևս ճիշտ է, որ այս կորմերում երեք չար աղնւականներ կան... Երեքը միասին չունեն հարիւր յիսուն հազար ֆրանկ տարեկան հասոյթ և նրանք... ուզում են իմ ձիերի հետ մրցել... (Գրուզին՝ բռնելով նրա ժիշտի կոճակը) Լալիր... այ կը տեսնես... Անցեալ կիրակի... Բայց դու չես նեղանում, որ քեզ հետ «գու»-ով իմ խօսում...»

ԳՐՈՒԻՉ. Ընդհակառակը...

ԻՍԻԴՈՐ. Բրաւճ... Դու անկեղծ մարդ ես..., Ես սիրում անկեղծ մարդկանց... Ես սիրում եմ, որ միմիանց «գու» տասնունք հին բեմիմի մարդիկ չենք—կոմա, դուքս... Մենք պարզ ու անկեղծ դեմոկրատներ ենք... չեմ... աշխատաւորներ... (Զարկում է Գրուզի փորին) Այ կը տեսնես... անցեալ կիրակի ես վերադաւանում էի Սեանտ-Կարիւրժից... անցընում եմ անտառով... մի փոքրիկ, նեղ ճանապարհ է, միայն մի կառող է անցնել... Յանկարծ ինչ իմ նկատում... իմ դիմաց յիսուն մետր հեռաւորութեան վրայ դուքս Դը-Մոժին... այն մեծ գեղձանիկը, որ դու տեսար կայարանում... որը յանդրդնութիւն ունի ընտրութիւնների ժամանակ իմ դէմ իր թեկնածութիւնը դնել... (Ուսար վեր քաշելով) Այն... Ես չեմ կամենում՝ ոչ ոք ինձանից առաջ անցնի... մանաւանդ դուքս Դը-Մոժին... հասկանում ես... Կառապանին ասում եմ՝ «Առաջը կտրիր, անցիր»...—Տեղ չը կայ, —պատասխանում է կառապանը... «Որ այդպէս է... հրիր, փոսը նետիր դուքս, կառք, ձիեր... բոլորն էլ... Եթէ ոչ ես քեզ հէնց այս երեկոյ կը վոնդեմ...» Այ պիտի ծիծաղես, հան... Կառապանը արձակում է ձիերը... Յանկարծ շրմիկ... Դուքսը մի կողմ, ես՝ միւս... կառապանը տասը մետր հեռու... թաւուափ մէջ... Ի՞նչ ջարդ ու բուրդ էր... բայց ևս ինձ չը կորցրի... Ես երբէք ինձ չեմ կորցնում... Մի ակնթարթում ոտքի եմ կանգնում, ձիերս զատում, բարձրացնում կառքս... ե... հերթիւ... անցնում, գնում. Մինչդեռ դուքսը գլխիվայր, ոտքերը օդի մէջ... Ահ, ահ, ահ... Ահա թէ ես ինչպէս եմ վարում դքսերի հետ... Ի՞նչ կ'ասես...»

ԳՐՈՒԻՉ. Հիանալի է...

ԻՍԻԴՈՐ. Եւ ի բաւացի... Ես յիսրւու միլիոնի տէր եմ...

Իսկ դուքսը... Հազիւ երկու... Մի աղքատ, մի թշուառական... Ահ, ինչպէս ես նեղն եմ գցում աղնւականներին...

Ֆինկ. Բայց ասացէք ինդրեմ, այդպիսով դուք ահագին ժողովրդականութիւն պիտի վայելէք...

ԻՍԻԴՈՐ. Ժողովրդականութիւն... Քիչ առաջ դու հօ լը-սեցիր... այն աղնիւ, պատուական մարդկանց... Ահ դու կը տեսնես ընտրութիւնների ժամանակ... դու կը տեսնես։ (Զերքի շարժումով ցոյց է տալիս, որ կառ է կրում, զցում փոսի մէջ) Դու այդ կը տեսնես... Եւ զիտես՝ ինչպէս են ինձ այստեղ անուանում, ինձ՝ Le chat-Tigre\*)... (Երեքն էլ միասին երկար ծիծաղում էին) Իսկոյն երեսում է, թէ ում հետ զործ ունեն... Le Chat-Tigre—Կատու-Վագրի հետ։ (Նա ձեռքերը իբր է շփում) Բայց բանը դրանումը չէ... Էյ դու, (Սպասաւորներից մէկին) այս պայուսակը կը տանես Ֆրանսուա Լի սենեակը... (Գրուզին) Հը!... ինչ կ'ասես, հաւանո՞ւմ ես...

ԳՐՈՒԴ. Կատարելապէս...

ԻՍԻԴՈՐ. (Միւս սպասաւորին) Իսկ այս... Լիւդովիկոս XIV-դի սենեակը...

Տ. ԼՀՇԱ. Ես պիտի ձեզ ասեմ, իմ բարեկամս, որ Լիւդովիկոս XIV-դի սենեակը ազատ չէ...

ԻՍԻԴՈՐ. Ինչպէս թէ ազատ չէ...

Տ. ԼՀՇԱ. Ես այստեղ իմ կակղին եմ չորացնում...

ԻՍԻԴՈՐ. Ահ, ահ... Հիանալի է... կակղին... Լիւդովիկոս XIV-դի սենեակում... Որ այդպէս է, ամար Լիւդովիկոս XV-դի սենեակը... (Ֆինկին) Իսկ դուցէ դու նախադասում ես Հենրիկոս II... Հենրիկոս III... Հենրիկոս IV... Լիւդովիկոս XIII... կամ Լիւդովիկոս XVI... Մի ամաչիր... Իմ զղեակում այնքան սենեակներ կան, որքան արքաներ ֆրանսիական պատմութեան մէջ... (Զերքերը շփելով) Հիանալի գաղափար է, չի...

ԻՍԻԴՈՐ. Արհամարհանք է... Ընտրիր...

Ֆինկ. Եթէ թոյլ կը տաք, ես կը վերցնեմ Լիւդովիկոս XV-դի սենեակը...

ԻՍԻԴՈՐ. Լիւդովիկոս XV-դի... Ես այդ զիտէի... Ահ, դու հին չարաձճի... (Սպասաւորին) Լիւդովիկոս XV-դի սենեակը... (Սպասաւորները պայուսակները վերցրած՝ բարձրանում են սանդուղներով):

Տ. ԼՀՇԱ. Պարոններ, բարեհաճեցէք ինձ ներել... Այս երեկոյ մեր ճաշը շտա համեստ է... (Սմուսուն) Դա քո մեղն է...

\*) Le Chat—կատու, Le Tigre—վագր:

Եթէ դու ինձ գոնէ հեռախօսով՝ յայտնէիր... (Գրուգին եւ Ֆինկին) Երեակայեցէք, պարոններ, որ ես չեմ կարողանում ստիպել ամուսնուս, որ ինձ վազօրօք նախազգուշացնէ, որ հիւրեր է բերում...

ԻՄԻԴՈՐ. Հիւրեր չեն սրանք... այլ բարեկամներ...

Տ. ԼՀՇԱ. Սակայն չը որ բարեկամներին էլ է հարկաւոր...

ԻՄԻԴՈՐ. Լաւ... լաւ... նրանք ուտելու համար չեն եկել...

ՅԻՆԿ. Ոչ, տիկին... Միք անհանգստանալ, ինդրեմ...

ԻՄԻԴՈՐ. Գործի համար են եկել...

ԳՐՈՒԴ. Անշուշտ...

ԻՄԻԴՈՐ. Ահագին գործեր... Քսան հազար ձիու ոյժի դործ... (Նա Ֆինկին եւ Գրուգին հրում է բեմի խորրը) Կնոջս վրայ ուշադրութիւն միք դարձնիլ... Նա բարի կին է... բայց հասարակ... (Վերադառնալով բեմի առաջը) Ա՞հ, ես սիրում եմ խոշոր գործեր... Խոչոր գործեր, ուր շարժում, պտտեցնում ես, իրար խառնում մարդկանց ամբողջ խմբեր... և միլլիոններ, ուրիշների միլլիոնները՝ լիքը-լիքը ձեռքերով գոփում... Հսկայական ձեռնարկութիւններ... կամուրջներ... նաւահանգիստներ... տրամուէներ... Ահա իմ կեսանքը... (Ֆինկին) Այս դու կը տեսնեա, թէ մենք ինչպէս կը տապալենք քո հայրենակից-շվեյցարացիներին... (Գրուգին) և քո բարեկամ գերմանացիներին... Երանք իրանք իրանց էլեկտրականութեան թագաւորներ են հաշւում... Սակայն նրանք ինձ չեն ճանաչում... Նայեցէք այս դղեակին... Լիւդովիկոս XIV-դն է նրան հիմնել... Ամբողջ արքունիքը, արիստօկրատիական ամբողջ խաժամուժը՝ թաւիշ և մետաքսների մէջ զուգուած, զարդարուած այստեղով են անցել... Ո՞ւմ է այժմ նա պատկանում՝ արքայական այս դղեակը... Մի իշխանի՛:—Ոչ... Դքսի՛.—Ո՛չ... Այլ մի պրոլետարի, մի սոցիալիստի...

ԳՐՈՒԴ. և Ֆինկ. Խսիդոր ԼՀՇԱՅԻՆ...

ԻՄԻԴՈՐ. Ժողովրդի վրէժը... Ա՛հ, ահ, ահ... Կեցցէ ժողովուրդը...

(Զախ կողմից վագելով՝ մտնում է կառավարիչը: Հեւալով, ամաչելով նա կանգ է առնում: Գա մի ծեր մարդ է. դէմքը կարմիր. մազերը ալեխան... մօրուքը գրեթէ ներմակ. թաւշէ պիշակ. կօշիկները փոշոտած: Գեղին կաշուէ պատեանի մէջ մի տապարիկ՝ ուսովը դցած):

## ՎԵՅԵՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

**ՄԻԵՒՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ**

ԻՍԻԴՈՐ. (Գիմնելով կառավարչին) Ա՞ա... վերջապէս դու բարեհաճեցիր... Ինչու դու ինձ դիմաւորելու չէիր եկել...

ԿԱՌԱՎ. (Ծնչասպան եւ Թօթովելով) Ներեցէք, պարզն, ես ուշացյա... Ես գնացել էի անտառի Փողիեր մասը՝ կրանիների վրայ նշան գնելու...

ԻՍԻԴՈՐ. Կաղնիները այստեղ ինչ գործ ունեն... Դու պարտաւոր ես լինել այստեղ՝ քո տեղը, երբ ես գալիս եմ... Վերջին անգամը լինի այդ... Հասկացար... (Հեղնաբար նրան ոտից զլուխ չափելով) Էյ դու... այդ շիկի համար ես... զլխարկդ ծածկած կանգնում... (Կառավարիչը զլխարկը փերցնում է) Սակայն... մի ամաչիր... Եթէ ձեր հասարակութեան մէջ ընդունուած բան է, որ ծառաները կարող են իրանց աղաների հետ զլխարկը ծածկած խօսել... շատ լաւ... (Գառնալով դիափ հիւրերը) Ես ձեզ ներկայացնում եմ Վիկոնտ Դը Լա Ֆոնտանէլ... իմ կառավարիչը... դարձեալ մի աղնաւական... Շատ ձախորդութիւններ է կրել խեղճը... կանայք... ձիեր... բակլարա... և ահա նա այժմ...

ԿԱՌԱՎ. (Մի ուժգին շարժուածք է անում... ձեռքը բարձրացրնում) Պարզն...

(Խսիդորը խիստ հայեացը է սեւեռում նրա վրայ:—Կառավարիչը լըռում է, ձեռքը վայր իշեցնում):

ԻՍԻԴՈՐ. Շատ բարի... (Հեղնօրէն)... Հազիր զլխարկդ ծերունի շուան \*), նոյն իսկ քո թագը... եթէ այն ևս մնացած ների հետ միապին չես ծախել... (Կառավարիչը՝ ստրացած եւ յուղուած... տատանում է... վերջապէս զլխարկը ծածկում:—Մանր րոպէ: Բոլորը էլ սրտնեղած դժուար զրութեան մէջ են... Խսիդորը նստում է սեղանի մօտ մի բազկամոռի վրայ, ոտքը ոտքի վրայ զնում: Ֆինկ և Գրուգ նեռանում են, իրար հետ խօսում) Ի՞նչ նոր բան կայ այսօր:

ԿԱՌԱՎ. (Կոկորդը դեռ սղմուած) Հիպպոլիտ Գուէն, Վիլֆիօի կապարառուն էր եկել, ագարակագարձը վճարել-վերջացնելու համար երկու ամիս նոր ժամանակամիջոց է խնդրում...

ԻՍԻԴՈՐ. Ո՞չ մի օր... վաղը իմաց տուր դատական վճռակատարին...

\*) Chouan—Վանդէլի տպատամբ՝ Փրանսիական առաջին հանրապետութեան դէմ:

ԿԱՌԱՎԱԼ. Նա մի պատւական մարդ է... Շատ անբախտ, նեղ դրութեան մէջ է... Ես ինձ թոյլ եմ տալիս...

ԻՄԻԴՈՐ. (Չար հայեացը զցած՝ ընդհատում է նրան): Ի՞նչ... (կառավարից լուս է)... Յետոյ...

ԿԱՌԱՎԱԼ. Ես չը կարողացայ պարտիզանի հաշիւը վերջացնել... Նա համաձայն չէ, որ դուք նրա ուժ օրուայ ոռճիկը կարէք...

ԻՄԻԴՈՐ. Նա համաձայն չէ... Յիրաւի... Մի խելառ, որ չի կարողանում նոյն իսկ սիսեռ բացնել և որը իրան թոյլ է տալիս առանց իմ համաձայնութեան այստեղ ինձ մօտ երեխաներ առաջ բերել... Հաշտարար դատաւորը նրա հաշիւը կը վերջացնէ... Վաղը մի նոր պարտիզան է դալու... Դու նրան կը դնես իր պաշտօնում. կը տեղաւորես... Յետոյ... Միայն չուտ-չուտ...

ԿԱՌԱՎԱԼ. Նկարչին ես տեսայ... Նա կատաղած է. Նա պընդում է, թէ դուք եք, պարոն, իրան յանձնարարել փականագործին յայտնելու, որ դայ վերջնէ մեծ պատիկոնի հնչակները...

ԻՄԻԴՈՐ. Նա զրաւոր հրաման ունի, ինձանից, իմ ստորագրութեամբ... Ո՞չ... Դէ թոն զլիսից սադ լինի... և թոն իմանայ... (Հանդիսաւոր կիրպով) Իմ ասածները ոչ մի նշանակութիւն չունեն... ինչ որ զրում եմ, միայն այն նշանակութիւն ունի... Պարտն նկարիչը կը կոտրուի, վայր կ'իջնի... Յետոյ:

ԿԱՌԱՎԱԼ. Ես խոտը հնձեցի այնպէս, ինչպէս դուք հըրամայել էիք...

ԻՄԻԴՈՐ. (Չայնը ցածրացնելով) Իսկ վտած առուցը:

ԿԱՌԱՎԱԼ. Խառնեցինք լաւ խոտերի հետ...

ԻՄԻԴՈՐ. Շատ լաւ... Գաղտորմուկներ չեն եղել այսօր...

ԿԱՌԱՎԱԼ. Որքան ինձ յայտնի է՝ ոչ... Պահապանները դեռ դեկուցանելու չեն եկել...

ԻՄԻԴՈՐ. Ինչու... Ո՞ւր են կորել...

ԿԱՌԱՎԱԼ. (Ցոյց տալով իր ժամացոյցը) Դեռ ժամի եօթը չը կայ, պարոն... Սակայն... կարծեմ, պառաւ Մոտաօխն բռնել են թափուած ցախեր հաւաքելիս...

ԻՄԻԴՈՐ. Վերապահուած պարկում:

ԿԱՌԱՎԱԼ. Ո՞չ, պարոն, մեծ պարկում...

ԻՄԻԴՈՐ. Այ, այն ցանկապատը... արհեստական մորենիները... երկաթի ցցերը... այն ամենը պառաւը երեւակայւում է՝ թէ խսունջների համար է... Արձանագրութիւն կազմեցիք... անշուշտ...

ԿԱՌԱՎԱԼ. Զեմ կարծում, պարոն...

ԻՄԻԴՈՐ. Եւ ինչու...

ԿԱՌԱՎ. Դա մի սովորութիւն է. պարոն... Դատը տանուել կը տայինք...

Տ. ԼԲՇԱ. (Ֆերմէնի դրդմամբ, որ մօր յետեւը կանգնած մղում, հրում է նրան) Սակայն, իմ բարեկամն, աղքատները ամեն տեղ էլ իրաւունք ունեն հաւաքել թափուած ցախերը...

ԻՍԻԴՈՐ. Իրաւունք... իրաւունք... Նախ՝ աղքատները ոչ մի իրաւունք էլ չ'ունեն... Եթէ նրանք նոյնիսկ մի այդպիսի անհեթեթ իրաւունք էլ ունենան, ես չեմ կամենում, որ ցախ հաւաքելու պատրուակով գան ինձ մօտ, մուտք գործեն զանազան թափառականներ, որոգայթներ լարեն, կտրտեն, փչացնեն իմ թաւուար... Ոչ... Հարկաւոր է մրան վերջ դնուի... Զը լը-սուած բան է, ճշմարիտ... Աղքատները... Կարելի է ենթարկել, որ այժմ ամեն ինչ նրանց է պատկանում... Նրանք... Դեմօնկրատ... Ոչ ոք այն աստիճան գեմօկրատ չէ, որքան ես... Սակայն ես և ապուշ չեմ... (Կնոջը) Զը որ շաբաթ օրերը այստեղ նրանց հաց են բաժանում...

Տ. ԼԲՇԱ. Իհարկէ բաժանում են...

ԻՍԻԴՈՐ. (Ցակնուվրալ անելով զամբիւղի մէջ եղած զործուածքները) Զը որ դու քո ամբողջ կեանքը նրանց համար ես մաշում... աչքերդ կուրացնելով նրանց համար բաճկրնակներ... գլխարկներ ու գուլպաններ... չը զիտեմ էլ ինչ գործում...

Տ. ԼԲՇԱ. Այսու դա ճիշտ է...

ԻՍԻԴՈՐ. Էհ ուրեմն... Եթէ նրանք վառելիք են ցանկանում... քարածուի կայ... գնեն... (Նա տեղից բարձրանում է և քայլում կառավարչին) Երբ կրկին բռնեն այն պառաւ կախարդին, թող ինձ մօտ բերեն... ես նրան մի դաս կը տամ, մի լաւդաս... (Ճեռքերը շփում է) Այլես ոչի՞նչ...

ԿԱՌԱՎ. Քիչ առաջ Մարկիզ Դը Պորսըլէն էր եկել...

ԻՍԻԴՈՐ. (Պարծանքով) Ահ, ահ... Պարոն Մարկիզը... ինքը իր անձամբ... բարեհածել է դար... այստեղ... Անկարելի է... Ուրեմն պ. Մարկիզը ոչ մի գրոշ չ'ունի այլես...

ԿԱՌԱՎ. Նա կամենում է ձեզ տեսնել... վաղը... անպատճառ...

ԻՍԻԴՈՐ. Վայ թշուառական... Շատ է շապում, ուրեմն... հեռախօսով յայտնիր, որ ես նրան վաղը... Ժամը երկուամին կը սպասեմ... նրա գործի թղթերն էլ պատրաստիր... (Ճեռքերը շփելով)... Ահ, պիտի ծիծաղենք...

ԿԱՌԱՎ. Մէկ էլ... կովը...

ԻՍԻԴՈՐ. Ահ, թշուառական, դու կարող էիր հէնց դրանից սկսել... Ինչպէս է նա այժմ...

ԿԱՌԱՎ. Շատ վատ:

ԻՍԻԴՈՐ. Յիմարութիւն ես ասում... Ոչինչ չը կայ...

ԿԱՌԵՎԼ. Անասնաբոյժը երկար քննեց նրան և յայտնեց,  
որ նա երկար չի ապրիլ...

ԻՍԻԴՈՐ. Հազար ութ հարիւր ֆրանկանոց կովը... Ի՞նչ  
է ասում... խելառ է, ցնդել է քո այդ անասնաբոյժը... Աւելի  
լաւ է գնա՞ Մարեկուրից ախտաբոյժին բեր... Իսկ մինչ այդ ես  
կը գնամ, ինքս անձամբ կը տեսնեմ... (բարեկամներին) Դուք  
թոյլ կը տաք... երկու բողէ միայն...

ԳԻՒԿ. Հաճեցէք...

ԳՐՈՒԳ. Խնդրեմ...

ԻՍԻԴՈՐ. Գարրօ...

ԼԻՒՍԻԷՆ. Պարսն...

ԻՍԻԴՈՐ. Եկէք ինձ հետ... ճանապարհին կը խօսենք...  
(Կառավարչին) Իսկ դու... առաջ անցիր... հ'ը... հիւթիթ... պարոն  
կոմս... (Կառավարիջը դուրս է գնում) Երկու բողէից յետոյ... ես  
ձեր տրամադրութեան տակ կը լինեմ... (Զերքի շարժումներով նը-  
րանց պատփրում է ուշադրութիւն չը դարձնել կնոջ խօսքերի վրայ) Իսկ  
ինչ վերաբերում է պարաբռութեան, իմ սիրելիս (դուրս է գալիս  
Լիւսիէնի հետ):

ԶԱՅՆԵՐ. (Կուլիսի յետեւից) Կեցցէ քաղաքացի Իսիդոր Լը-  
շան...

ԻՍԻԴՈՐ. (Կուլիսի յետեւից) Բաւական է, բաւական... Մար-  
դը ոչինչ է... գլխաւորը գաղափարն է, գաղափարը...  
(Զայները զնալով զնալով հեռանում, չքանում են: Ֆինկէ եւ Գրուգ քիչ ապ-  
շած են):

Տ. ԼԻՇԱ. (Փոքր լուսթիւնից յետոյ դիմելով նրանց) Մեծ ե-  
րեխայ...

Թարգմ. Ա. ՇինեԱնՑ

(Կը շաբունակուի)